Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2020 թվականի
հունվարի 9 -ի N 8 - Ա որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Ծ. Սողոմոնյան	-	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)
Ժ. Անդրեասյան	-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Գ. Թովմասյան	-	ՀՀ վարչապետի աշխատակազմի կարգավորման ազդեցության գնահատման վարչության պետի պաշտոնակատար
Ա. Գալստյան	-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կենսաթոշակային վարչության պետ
Ա. Հարությունյան	-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության մեթոդական օժանդակության բաժնի պետ
Մ. Գրիգորյան	-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի պետ
Ռ. Պետրոսյան	-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչության վերլուծության բաժնի պետ
Ա. Սարգսյան	-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2020 թվականի
հունվարի 9 -ի N 8 - Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կարգավորման ազդեցության գնահատման ապակենտրոնացված համակարգի փորձնական ներդրման աշխատանքների իրականացմանն աջակցող աշխատանքային խմբի (այսուհետ՝ աշխատանքային խումբ) նպատակների, գործառույթների և գործունեության կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանքային խմբի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում կարգավորման ազդեցության գնահատման ապակենտրոնացված համակարգի փորձնական ներդրման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 1323-Լ որոշման իրականացման կազմակերպումն է:

3. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Աշխատանքային խմբի գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարողությունների գնահատման իրականացումը՝ կարգավորման ազդեցության գնահատման համակարգի փորձնական ծրագրի ներդրման նպատակով.

2) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան աշխատողների՝ կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ վերապատրաստման աշխատանքների համակարգումը.

3) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սոցիալական ազդեցության գնահատման ոլորտային հարցաշարերի և ուղեցույցների մշակման աշխատանքների համակարգումը:

III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգի 8-րդ կետին համապատասխան:

6. Աշխատանքային խմբի նիստերը հրավիրում և վարում է աշխատանքային խմբի ղեկավարը:

7. Աշխատանքային խմբի ղեկավարի բացակայության դեպքում աշխատանքային խմբի նիստը կարող է վարել անդամներից մեկը՝ աշխատանքային խմբի ղեկավարի հանձնարարությամբ:

8. Աշխատանքային խմբի արտահերթ նիստ կարող է գումարվել աշխատանքային խմբի ղեկավարի նախաձեռնությամբ կամ աշխատանքային խմբի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

9. Աշխատանքային խմբի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է աշխատանքային խմբի կազմի առնվազն երկու երրորդը:

10. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են նիստին ներկա աշխատանքային խմբի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ընթացքում աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

11. Աշխատանքային խմբի անդամներն աշխատանքային խմբի նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի մասին տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ:

12. Աշխատանքային խմբի յուրաքանչյուր նիստ սկսվում է նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին համապատասխան ներկայացուցչի զեկուցմամբ:

13. Աշխատանքային խմբի կողմից աշխատանքային գործընթացը աշխատանքային խմբի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպվում է գրավոր հաղորդակցության միջոցով:

14. Աշխատանքային խմբի աշխատանքների ընթացքում գրավոր հաղորդակցության հիմնական եղանակն էլեկտրոնային փոստն է:

IV. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԸ

15. Աշխատանքային խմբի ղեկավարը՝

1) համակարգում է աշխատանքային խմբի գործունեությունը և ապահովում որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը.

2) հրավիրում և վարում է աշխատանքային խմբի նիստերը.

3) իր բացակայության դեպքում աշխատանքային խմբի անդամներից մեկին հանձնարարում է վարել աշխատանքային խմբի նիստերը.

4) աշխատանքային խմբի նիստերի ընթացքում կարող է տալ ցուցումներ ու հանձնարարականներ.

5) իրականացնում է սույն աշխատակարգի դրույթներից բխող այլ գործառույթներ:

V. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

16. Աշխատանքային խմբի անդամը՝

1) պարտավոր է անձամբ մասնակցել աշխատանքային խմբի նիստերին, իսկ մասնակցության անհնարինության դեպքում՝ դրա մասին նախօրոք գրավոր տեղեկացնել աշխատանքային խմբի ղեկավարին՝ նշելով նիստին իր փոխարեն մասնակցող անձի տվյալները (պաշտոնը, անունը, ազգանունը).

2) կարող է աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացնել հարցեր՝ համապատասխան հիմնավորմամբ.

3) աշխատանքային խմբի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնում է բանավոր կամ գրավոր կարծիք.

4) քվեարկում է աշխատանքային խմբի օրակարգում ներառված հարցերի շուրջ կայացվող որոշումների համար.

5) աշխատանքային խմբի կողմից ընդունված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում ներկայացնում է գրավոր (հատուկ) կարծիք.

6) աշխատանքային խմբի ղեկավարի հանձնարարությամբ՝ հանդես է գալիս որպես հարցը նախապատրաստող և զեկուցող.

7) պաշտոնից ազատվելու պահից կորցնում է աշխատանքային խմբի անդամությունը: Նրա փոխարեն աշխատանքային խմբին անդամակցում է նույն պաշտոնն ստանձնած անձը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ